ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի ուղերձը ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ

17 նոյեմբերի, 2011թ.

Սիրելի՛ ուսանողներ,

Այսօր Ձեր տոնն է. Ուսանողության միջազգային օրը: Ընդունեք Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և իմ շնորհավորանքները՝ հույսի, երազանքների, կենսախնդության և երջանկության տոնի առիթով:

Սիրելի՛ ուսանողներ, ես հպարտությամբ պետք է փաստեմ, որ վերափոխվող մեր բուհի սովորողներդ կարևորում եք գիտելիքի, կրթության որակի և բարձրորակ մասնագետ դառնալու արժեքը: Արագ փոփոխվող աշխարհում հայ երիտասարդը պետք է ունենա խորը և բազմակողմանի գիտելիքներ, խնդիրների ոչ ստանդարտ լուծումներ գտնելու կարողություն և ստեղծագործ միտք՝ գիտակցելով լեզուների և կառավարման ժամանակակից գործիքներին տիրապետելու կարևորությունը:

Օգտվելով առիթից՝ շնորհակալություն եմ հայտնում մեր էջի հրապարակումներին հետևելու և մեկնաբանություններ թողնելու համար:

Մաղթում եմ Ձեզ հաջողություններ: